## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՆԱԳԵՏԻ ՊԱՏՃԵՆԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻՑ

*1991 թ. մայիսին լրացավ ֆրանսիական ականավոր հնագետ և տաղանդավոր պատճենահանող նկարիչ Ժան Կլեդայի (1871—1943) ծննդյան 120-ամյակը։ Իր կյանքի շատ տարիներ նա նվիրել է Նեղոսի հովտի պեղումներին։ Նրան համաշխարհային փառք են բերել Բաուիթ գյուղակի մոտակայքում տեղական սուրբ Ապոլոնիուսի անունով հսկայական վաներքն են։ Այդ բացատրական և նվիրատվական արձանագրությունները արված են ղպտիական ճերմակ վանքի (արաբ. Դայր էլ-Աբիյադ) գանձատան արևելյան խորանի գմբեթի ձախ կողմում, «Քրիստոսը փառքի մեջ» պատկերի կողքին*[1]*։ Աջից ղպտիերեն արձանագրությունն է։ Հայերեն և ղպտիերեն արձանագրությունների բովանդակությունից երևում է, որ խորանի*



*որմնանկարները կատարել է «Թեոդորոս նկարիչը և գրիչը» ի «գաւառէն Քեսնոյ» XI դարի*

*նական համակառույցի պեղումները։ Այժմ Կլեդայի անունը կարելի է կապել նաև հայագիտության հետ։*

*Հնագետի 1900-ական թթ. վերաբերող օրագրային նոթերում եղել են նաև նրա պատճենած հայերեն արձանագրությունները։ Դրանք*

---

[1] *Այս պատկերը քաջ հայտնի է ղպտիագիտական գրականության մեջ. վաղ օրինակները՝* В. Г. Бок. Материалы по архсологии христианского Египта. СПб., 1901, табл. XXI, № 1.

վերջին[2] և 1124-ին ավարտել է նրա ղպտի անվանակիցը։

Բ. Ա. Տուրաևի և Ու. է. Կրամի հրատարակած ղպտիերեն արձանագրությունը[3] քաջ հայտնի է։ Հայերեն արձանագրությունը ևս կա գրականության մեջ. այն գերմաներեն թարգմանել է Հ. Տաշյանը, այդ թարգմանություններից երեք անգամ օգտվել է Յ. Ստրժիգովսկին[4]։

Քանի որ չկան այդ արձանագրությունների հայերեն վերարտադրությունները, ինձ թվում է, որ բնագրագետներին, վիմագրագետներին, պատմաբաններին, արվեստաբաններին անշուշտ կհետաքրքրեն այդ արձանագրությունների վերարտադրումները Ժ. Կլեդայի պատճենումով։



Այդ պատճենները հայտնաբերել է ստրասբուրգցի գիտնական Ժան-Մարկ Ռողենստիլը։ Նա էլ դրանք հրապարակել է, «Le releve, par Jean Cledat, des inscriptions armeniennes du Cóuvent Blanc» հաղորդումով հանդես գալով Պերիգյոյում 1991 թ. մայիսի 17-ին։ Նրա սիրալիր թույլատրությամբ մեր այս փոքրիկ հոդվածին կցում ենք Ժ. Կլեդայի պատճենների վերարտադրությունը։ Պատճենները Ժ. Կլեդայի դաշտային օրագրում հինգ էջ են զբաղեցնում (№№ 88—92)։ Դա ոչ մեծ չափսի տետր է՝ քառակուսի տողերով։ Նրանցում սև թանաքով սխեմատիկ նշված են արձանագրությունների գտնվելու տեղերը, պատճենված են բուն արձանագրությունները, որոնց ուղեկցում են ֆրանսերեն բացատրությունները։ Հաջորդ էջում բերված են մի քանի հայերեն տառեր՝ մատնանշված ֆրանսերեն այբուբենի համապատասխան գրերով։

---

[2] Ղպտիական Ճերմակ վանքում հայ նկարչի աշխատանքի ժամանակի մասին մասնագետների կարծիքները տարբերվում են։ Ոմանք կարծում են, որ նա որմնանկարները կատարել է 1076 և 1112 թթ. միջև, ոմանք էլ տարեթիվը մատնանշում են «մոտ 1076 թ.», երրորդներն էլ «մոտ 1090 թ.»։ Այդ մասին տե՛ս А. Я. Каковкин. Армяне в средневековом Египте (к вопросу о культурных связях армян и египтян).—Историко-филологический журнал, 1982, № 1, с. 155.

[3] Б. А. Тураев. Материалы по археологии христианского Египта. Труды XII Археологического съезда в Киеве. Т. II, М., 1902, с. 21, № 52;

W. E. Crum. Inscriptions from Schenoutes Monastery. Journal of Theological Study. V. V, 1912, p. 557.

[4] J. Strzygowski. Kleinasien ein Neuland der Kunstgeschichte. Leipzig 1903, S 202—203; Idem. Der Dom zu Aachen und seine Entstellung. Leipzig. 1904, S. 43, 78—79; Idem. Die Baukunst der Armenier und Europa. Bd. II, Wien, 1918, S. 731, 732. Ղպտիերեն և հայերեն արձանագրությունների ռուսերեն թարգմանության տարբերակները տե՛ս А. Я. Каковкин. Указ. соч., с. 154—155.

Ա. ՅԱ. ԿԱԿՈՎԿԻՆ (Ս. Պետերբուրգ)